4 (101). ԱԴՈՆ ՈՒ ԲԸԴՈՆ

Կէղնի մեկ կնիկ, մեկ մարթ, կնկան անուն Բըդո ա, իրկան անուն Ադո։ Էտոնց մեկ հատ էլ աղչիկ կէղնի։

Էտ աղչիկ կճոչնա, խելք բան կկտրա, կարքըվելու դեվի[1] կէնա։

Սեր կասա.— Ադո։

Կասա.— Ի՞նչ ա, Բըդո։

Կասա.— Արե խելք թափենք։

Կասա.— Թափե՛նք, թափե՛նք։

Կասա.— Էրթանք մեր աղչըկեն բան բերենք կարքըվելու համար։

Կէրթան մեկ հոխա սև բուրթ կբերեն, կուտան աղչըկեն, կասեն.— Տար էսի լվա, թըխ սվտըկի։

Ադոն ու Բըդոն խելք չունին, թեթև ին, աղչիկն խելացի էր։ Ճար չկար օր ազատվեր էտոնց մոտեն։

Աղչիկ բուրթ տարավ գետ, կարմնջի տակ, աղոթըրնին կէրթա, հ՝իրկուն կուգա։ Լվաց, լվաց բուրթ գինե[2] սև մնաց։ Կէղնի տասն օր տարավ լվաց ու բերեց, սվտըկելու ճար չէղավ։

Ամմա մեկ թյուջարի տղա հ՝ըմմեն օր էտ կարմընջով կէրթեր ու կուգեր, էտ աղչկա շարշրում տեսավ։ Էտոր խեղճ էկավ, ասաց՝ «Ես պիտի էս աղչիկ ազատեմ էս շարշարմունքից»։

Մեկ օր կանավ կարմունջի վրեն, աղչկա մոտեն խարցուց.

Ասաց.— Ի՞նչ ա կէնես դու, հ՝ըմեն օր բուրթ կլվաս, էղոր մանեն[3] ի՞նչ ա, ղի ասա։

---

1 Միտքը դգացնել տալ (Ծ. Բ.)։

2 Նորից (Ծ. Բ.)։

3 Միտքը, պատճառը (Ծ. Բ.)։

Աղչիկն ասաց.— Ես էլ չեմ դիտեր, թե ինչ ա կէնեմ։ Իմ մեր-ծուռ, իմ խեր ծուռ, իլլայի սև բուրթ տված ա ընձի, կասեն՝ «Տար լվա, Թրխ սվտրկի»։ Ես էլա իմ հ՝ախուն բերեմ լվամ։

Տղեն կասա.— Աղչի՛, արի, հ՝ելիր թարքս[1] ես քեզի տանիմ ապատեմ էտ ծրռերու մոտեն։

Տղեն էնի տարավ տուն։

Տաոնանք Ադոյին ու Բրդոյի վրեն։

Հ՝իրիկուն էղավ, աղչիկ տուն չէկավ։ Խարցուցին էս տեղ, էն տեղ, խաբարն առան, թե մեկ թյուշարի տղա տարեր ա ուրին հ՝ապով, արեր ա ուրին կնիկ։

Բրդոն ասաց.— Ադո, ադա[2], արի խելք թափենք։

Ասաց.— Թափենք, թափենք։

Ասաց.— Փշուր մի բան բերեք, էրթանք մեր աղչիկ տնսնենք։

Գացին մեկ քիչ խիղարի թեփ ժողվեցին, բերեցին, ուշտի մեջ շաղղեցին, պաղ թորվան կող զարկեցին, իրեք չորս օր էտոր իշկեցին չուր էփի։

Պլիթը թորվան մեջ չորացավ, ուրենց գիցածով էփավ։ Թորվանկողից խանեցին, լցեցին խուրջին, շալկեցին ու գացին, խասան աղչրկե տուն։ Աղչրկեն մուժդա տարան, թե քու խերն ու քու մերն էկան։

Աղչիկը վազավ հ՝առեմ, շուտ բացեց խուրջին, քանի օր գիտա օր խեր ու մեր ծուռ ին, խոր ու մոր բերածներ թափեց գետ, ուրանց էմշրներուց[3] լցեց խուրջին ու ինք թորկեց գնաց։

Կիսուր խարցուց մոտեն թե.— Ի՞նչ ա բերեր քու խերն ու քու մեր։

Ասաց.— Մեր էմշրներուց ա բերեր, ի՞նչ ա բերեր։

Հ՝իրիկուն էղավ, խերն ու մեր տարավ օգեն օր քընին։

Ճրաքն օր կպավ, իշկեցին, իշկեցին օր իլին։ չամիչ է էտ տեղ։

Ասաց.— Ադո՛։

Ասաց.— Ի՞նչ ա, Բրդո։

Ասաց.— Ադո, արի խելք թափենք։

Ասաց.— Թափենք, թափենք։

Ասաց.— Էս սև թրսթան բոլճրներ ի՞նչ ա լցած էս տեղ, քանի՞ օր մեր աղչրկե բալեն[4] են, մեր աղչիկ պիտի թափա։

Ասաց.— Ա՛դո։

---

1 Դավակս (Ծ. Բ.)։
2 Այ տղա (Ծ. Բ.)։
3 Պտուղներից (Ծ. Բ.)։
4 Պատիժ (Ծ. Բ.)։

Ասաց.— Ի՞նչ ա, Բրդո։

Ասաց.— Արի էս սև բոլՃրներ թափենք դուս։

Ջուր աղոթրան բացվավ, հ՚ըմեն թափեցին դուս։ Ավիլեցին, խստրկեցին, նստան, բան չըմնաց։

Աղոթրնին, աղչիկ շուտ էկավ, իշկեց օր հ՚օդի մեջ բան չկա, դուս խանեց խերն ու մեր, հ՚օդի դուռ փակեց։ Էն օր մնացին։ Նորեն հ՚իրիկուն էղավ։ Աղչիկն էկավ, խերն ու մեր տարավ ընելու հ՚ապով։ Մտան ներս, ուրանց նստան։ Ճրաք կպավ, իշկեցին օր ի՞նչ իշկեն։ Կէղնի քսան խատ պըպոզ[1], բացին բերներ, հ՚ըմեն քաղցր ա։ Ուրանք չեն գիտեր, թե ուտելու բան ա։

Ասաց.— Ա՛գո։

Ասաց.— Ի՞նչ է, Բրդո։

Ասաց.— Արի խելք թափենք։

Ասաց.— Թափենք, թափենք։

Ասաց.— Էս սև մրրկաթներ արի թափենք դուս։

Ջուր աղոթրան բացվավ, հ՚ըմեն թափեցին դուս, հ՚խստրկեցին, ավիլեցին, նստան։

Աղոթրան էղավ, աղչիկ շուտ էկավ, իշկեց օր բան չկա, քաղցրեր հ՚ըմեն լցած ա գետ։

Խերն ու մեր դուս խանեց, հ՚օդի դուռ փակեց, ամմա շատ հրոստավ ուրանց վըրեն։

Էն օրն էլ գնաց։ Էղավ իրիկուն։ Աղչիկն էկավ, խերն ու մեր տարավ տըռան հ՚ետև, ղաղերու մոտ։ Կէղնի էտ տեղ խարիր խատ ղաղ։ Ղաղ ա, կըտընցով ղուրանց քորեն, մորեն։ Էտունք իշկեցին, գիտցան, թե օջիլ կա ուրանց վրեն, օր ղուրանք կքորեն։

Ասաց.— Ա՛գո։

Ասաց.— Ի՞նչ ա, Բրդո։

Ասաց.— Արի խելք թափենք։

Ասաց.— Թափենք, թափենք։

Ասաց.— Ուզենք մեկ պղինձ, փշուր մե լա փետ, վառենք, ջուր տաքցուցենք, մախսուս ասենք մեր օտներ կլվանք, թող մեր աղչիկ չխասկնա, բերենք ղաղերու գլոխ լվանք։

Ուզեցին պղինձ, փետ, ջուր, օճախ կպուցին, ջուր էռաց, ղաղերու ոտ ու գլոխ բռնեցին, գլուխ վերեն զարկեցին պղնձի մեջ ու խանեցին, մեկ-մեկ թառի վերեն դրեցին։ Խարիր ղաղն էլ լվացին, ամմա խատուցին հ՚ըմեն էլ։

---

1 Քաղցրավենիքի աման (Ս. Բ.)։

Ասաց.— Ա՛դու։

Ասաց.— Ի՞նչ ա, Բրդու։

Ասաց.— Տեսա՞ր ի՞նչ խելք էր թափեցինք, ղազեր հ՚ըմեն ոըհաթան ու քնան։

Աղոթրան էղավ, աղչիկ շուտ էկավ, տեսավ օր մեկ ղազ սաղ չկա։

Հ՚ելավ մեկ խատ օսկի տվեց խորն ու մոր, դուռ բացեց ու դուս լ՚րեց։

Մնաց օր աղչիկ ուր փարով ուր խորն ու մոր տված զարարներ[1] կառնի կլցու։

Խերն ու մեր գացին։ Շատ գացին, քիչ գացին, մեկ խովըվի ռաստ էկան։

Ագոն ասաց.— Խովիվ, արի էսա տեղ, քեղի բան կասեմ. առ էսա փարեն քեզի, մեզի հմալ օչխար մի բերես օր պնչներուց մեղր գա։

Խովիվ տեսավ օսկին, ուրախութենե ծռավ։ Գնաց ճըղի[2] մեջ, ո՛ր մեկն օր աղեկ օչխար էր, խտրկեց բերեց։ Ագոն ու Բրդոն չխավնան։

Ասաց.— Խովիվ, խընձ էսի է՛լ աղեկ օչխար բեր։

Ասաց.— Խընձ էսի էլ աղեկն չունեմ, դու գնա քու ձեռքով խտկա բեր։

Գացին, էմալ օչխար մի բերեցին, օր խինգ կոռշ չարժեր, քընթեն ու բերնեն խլինք կթափեր։ Խովիվ շատ ուրախցավ, օր խավնան էտ գեշ օչխրին։

Ագոն ու Բրդոն առան օչխար, գացին տուն, թոնիր վառեցին, էտ օչխար տրեցին խիրիսա։

Ասաց.— Ա՛դու։

Ասաց.— Ի՞նչ ա, Բրդու։

Ասաց.— Արի խելք թափենք։

Ասաց.— Թափենք, թափենք։

Ասաց.— Էրթանք պրակ ատման խոբթիչ բերենք օր խիրիսեն տատենք։

Ուրանց փարեն կապեցին շորի մեջ, դրեցին սան գլոխ, թունիրն էլ աղեկ ծածկեցին, օր խիրիսեն չպաղի։ Դուռ փակեցին, պալնիս դրեցին պատի գլոխ, գացին պրակ։

Գացին ճամխու մեջտեղ մեկ մարթ էդանց ռաստ էկավ։

Ադոն ասաց.— Մա՛րթ, քու խեր կանիծիմ, չէլնի էրթաս մեր տուն՝ հանդե խիրիսեն թոնիրն է, փարեն էլ կապուկ ա շորի մեջ,

---

1 Վնասներ (Ս. Բ.)։

2 Ոչխարի հոտի (Ս. Բ.)։

դրուկ ա սան գլոխ, պալնիսն էլ պատի գլոխն ա։ Ջքո խեր կանիծիմ, օր թե էրթաս առնիս։

Ադոն ու Բրդոն գացին։

Դառնանք էտ մարթու վրեն։ Մարթ ասաց. «Կարէլի է էսանք ծուռ են, ես պիտի էրթամ իշկեմ, կէղնի օր օղորթ ա»։ Գնաց ծեռ տվեց պատի գլոխ, պալնիս տեղ, դուռ բացեց մտավ ներս, շուտ թոնիր բացեց, խիրիսեն էլ պուտկի մեջ, կուշտ կերավ, զպուտուկն էլ ապականեց։ Սան գլոխն էլ իշկեց, փարեն էլ տեղն էր, վերցեց փարեն, շորի մեջն էլ ապականեց, էլմեն սան գլոխ դրեց։ Հ'ելավ պալնիս պատի գլոխ դրեց, թորկեց գնաց։

Գանք Ադոին ու Բրդոին վրա։ Գացին պրակ, մեկ-մեկ ճյուղ ծառ-քոքերով քաշեցին, թևերու վրեն դրեցին ու էկան։ Էկան դուռ, իշկացին օր պալնիս տեղն ա։

Ասաց.— Ա՜դո։

Ասաց.— Ի՞նչ ա, Բրդո։

Ասաց.— Տեսա՞ր, ի՜նչ խելք էր թափեցինք։ Էն դախ օր էն մարթուն խոր գանգ չքֆրի ու թամբեխ[1] չէնի, պիտի մտներ մեր տուն, խիրիսեն էլ ուտեր ու փարեն էլ տաներ։

Դուռ բացին մտան ներս։ Իշկեց օր թորվան պերան պաց, ճանչերն էլ լցված են պուտկի մեջ։

Վազավ, փարեն իշկաց։ Իշկեց օր կակուղ ա։ Շոր պացեց օր ապականված ա։

Ասաց.— Սունը վեր հ'ելանի՜, հ'ելանի, իմա՞լ պուպուզ անի, իմալ քաքանի։

Դարձավ պուտկի վրա, ասաց.— Ա՜դո։

Ասաց.— Ի՞նչ ա, Բրդո։

Ասաց.— Արե խելք թափենք։

Ասաց.— Թափենք, թափենք։

Ասաց.— Էս մեր խերիսեն կա ու չկա, էս ճանչերն են կերած։— Ճանչ մի թռավ Բրդոյի ճակտին նստավ։

Ասաց.— Բրդո։

Ասաց.— Ի՞նչ ա, Ադո։

Ասաց.— Ճակատ պինդ բռնա։

Կացին առեց ձեռք, մեջ ճակտին զարկեց։ Բրդոն մեռավ։ Ադոն հ'ելավ թորկեց, տնեն գնաց։ Գնաց ինադ էրեց, գետ կլոխկնա։ Գետին մեջը մամուռներ կու գան փաթվին իր ամոթ։ «Ադա, կըսե՝ Բրդոն մեռեր ա, դուն կանաչ ու կարմի՞ր կփաթեսս»։ Ջրից դուս կելնի, չախուն ջոբեն կբանա, կթալա ու ամոթ կտրա։ Էն էլ էտտեղ կմեռնի։

---

1 Պատվեր (Ծ. Բ.)։